# Մուտքագրեք PIN կոդը և օգտագործեք Ձեր 2025 թվականի SUN Bucks քարտը, նախքան Ձեր նպաստների ժամկետի ավարտը

SUN Buck-ն օգնում է ընտանիքներին սնունդ գնել իրավասու երեխաների համար, մինչ դպրոցները փակ են: Յուրաքանչյուր SUN Bucks քարտ պարունակում է $120, և յուրաքանչյուր երեխա կարող է քարտը ստանալ ամռան ընթացքում տարբեր ժամանակահատվածում: **SUN Bucks-ը չի ազդում Ձեր ընտանիքի ներգաղթի կարգավիճակի վրա:**

## ՁԵՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ SUNBUCKS ՔԱՐՏԸ ՓՈՍՏՈՎ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԵՏԵՎԵԼ ՆՇՎԱԾ ՔԱՅԼԵՐԻՆ.

### Ինչպես օգտագործել Ձեր SUN Bucks քարտը...

Ընտրեք Ձեր քարտի անձնական նույնականացման համարը (PIN)՝ մուտք գործելով ebtEDGE բջջային հավելված, այցելելով www.ebt.ca.gov կայքը կամ զանգահարելով SUN Bucks-ի աջակցության բաժին՝ (877) 328-9677 հեռախոսահամարով:

**Ուշադիր եղեք, որպեսզի ծախսեք Ձեր SUN Bucks-ը նախքան CalFresh-ի նպաստները, և օգտագործեք այն Ձեր քարտին գումարը բեռնվելուց հետո 122 օրվա ընթացքում:**

### Եթե <u>չեք</u> ցանկանում օգտագործել Ձեր 2025 թվ-ի SUN Bucks քարտը...

Զանգահարեք SUN Bucks-ի Աջակցության բաժին՝ (877) 328-9677 հեռախոսահամարով՝ տեղեկացնելու 2025 թվ-ի SUN Bucks ծրագրից հրաժարվելու մասին:

**Հրաժարվելուց հետո, Դուք կարող եք ոչնչացնել SUN Bucks քարտերը, որոնց կարիքը Դուք այլևս չունեք:**

## Ինչ <u>կարող եք</u> գնել SUN Bucks քարտով.

- մրգեր և բանջարեղեն
- կաթնամթերք
- սերմեր և բույսեր, որոնք համարվում են սնունդ ուտելու համար
- միս, թռչնամիս և ձկնեղեն
- հացաբուլկեղեն և հացահատիկներ
- այլ մթերքներ, ինչպիսիք են նախուտեստները և ոչ ալկոհոլային խմիչքները

## Ինչ <u>չեք կարող</u> գնել SUN Bucks քարտով.

SUN Bucks-ը **չեք կարող** օգտագործել տաք կերակուրներ, կենդանիների համար սնունդ, մաքրման կամ կենցաղային իրեր, անձնական խնամքի պարագաներ և դեղորայք գնելու համար:

SUN Bucks ստացող երեխաները դեռևս **կարող են** իրավասու լինել իրենց համայնքներում գործող այլ ամառային սննդի ծրագրերին: Ձեզ ամենամոտ վայրը գտնելու համար զանգահարեք՝ 1-866-3-HUNGRY (1-877-8-HAMBRE) հեռախոսահամարներով, ուղարկեք “food” և “SFSP” բառերով հաղորդագրություն հետևյալ համարին՝ 1-914-342-7744 կամ այցելեք <u>www.fns.usda.gov/summer/sitefinder</u> կայքը:

**Ցանկանու՞մ եք ավելին իմանալ:**

- Այցելեք՝ <u>http://www.cdss.ca.gov/SUNBucks</u>:
- Դիտարկեք <u>CDSS YouTube SUN Bucks Playlist</u>-ը:
- Սկանավորեք արագ արձագանքման (QR) կոդը:

**SUN Bucks ծրագիրը Կալիֆորնիայում հնարավոր է դարձել ԱՄՆ Գյուղատնտեսության վարչության (USDA), Սննդի և սնուցման ծառայության (FNS) ֆինանսավորմամբ և իրականացվում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության (CDSS) միջոցով՝ Կալիֆորնիայի Կրթության վարչության (CDE) հետ համատեղ: <u>www.cdss.ca.gov/sunbucks</u> | <u>www.cde.ca.gov/ls/nu/sf</u> | SUNBucks@dss.ca.gov:**
**USDA-ն հավասար հնարավորություններ տրամադրող գործատու և վարկատու է: 2025**
**Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ <u>www.fns.usda.gov/summer</u>:**

(Armenian)